

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԳԱՌՆԻԿ ԵՎ ԱՆԺԵԼԱ ՆՈՎՍԵՓՅԱՆՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱԿԱՏԱՆԱՅ
ԱՌ՝ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԱՌՆԻԿ ԵՒ ԱՆԺԵԼԱ ՅՈՎՍԷՓԵԱՆՆԵՐ**

Սիրելի Տէր եւ Տիկին Յովսէփեաններ,

Գոհունակ սրբով բարձր գնահատանքի Մեր խօսքն ենք ուղղում Ձեզ, որ առ Աստուած ունեցած Ձեր հասկարտուն հաւատով կարող եղաք առաւել ծաղկեցնել ու գորացնել ձեռնարկից ժառանգած մեծ ու անկեղծ սէրը հարազատ ժողովրդի, Նայրեմիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ՝ այն կեանքի ու գործի վերածելով:

Տակաւին փարիներ առաջ լինելով Ձեր հայրենի ճննդավայր Չքնաղ գիւղում, Մենք ականատես եղանք, թէ հաւատարմ մեր ժողովրդի գաւակները ինչպիսի զգացումով են սպասում այն երջանիկ օրուան, երբ վերստին իր դռները պիտի բացեր գիւղի խոնարհուած եկեղեցին՝ օրհնութիւն բաշխելու իրենց հարազատ հողին եւ հոգեւոր նոր շունչ ու ջերմութիւն բերելու իրենց կեանքին: Այսօր, Տիրոջ բարեխնամ օրհնութեամբ այդ երազն իրականութիւն է՝ կեանքի կոչուած Ձեր ազնիւ հովանաւորութեամբ: Մենք վերստին Չքնաղում ենք՝ կատարելու խոնարհուած եկեղեցու կողքին նոր շուրջով յառնած Սուրբ Սյրեփաննոս եկեղեցու օժման արարողութիւնը եւ նրա խնկարոյր կամարների ներքոյ փառաբանելու «զԱստուած հարցն մերոց», որ դարեր շարունակ անսասան է պահում Նայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ Զրիսպոստարոր առաքելութեամբ հովուելու բարեպաշտ մեր ժողովրդին: Բոլորիս հոգիներում բարի մտղթանաց հայցն է առ Բարձրեալ Տէրը՝ Յովսէփեան հաւատարմ ընկերների, Ձեր եւ Ձեր գաւակների՝ Աղուանի, Օվսանայի, Նրաչիկի եւ Ռուբէլի համար, որոնց ճանաչում ենք անձնապէս եւ ծանօթ ենք նրանց ազգասէր ու եկեղեցաւուէր ոգուն: Երանի Ձեզ՝ «եկեղեցի շինողաց, նրախարարաց, պարզարուից...»:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնը մեր Եկեղեցուն ու ժողովրդին, Սուրբ Սյրեփաննոս եկեղեցու օժման ուրախ առիթով Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պատրոյ բարձրագոյն շքանշանը:

Մրտաբուխ աղօթքով հայցում ենք, որ Ամենակալ Աստուած հաապոյ մեր հայր եւ մեծ խոստովանող Սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ Սուրբ Սրբեփաննոս Նախավկայի բարեխօսութեամբ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահպանի ընտանեկան Ձեր յարկը եւ զօրավիզ լինի Ձեզ ու Ձեր զաւակներին բարի ու հայրենանուէր բոլոր իրագործումներում:

Թող Բարին Աստուած Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Սուրբ Սրբեփաննոս եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգևներով առաքապէս շնորհագարդի Եկեղեցու նուիրեալներին ու բոլոր հաապրացեալներին:

Ողջ լերոսք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Նոզոյն եւ յաւեր օրհնեալ ի Մեզ առէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 20-և Յունիսի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Մրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 249